[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
9	Նոյեմբեր	2018 թ.		U	9202683319
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
9	Նոյեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կոդունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծանանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	50102218 բարձրագույն բժշկական կրթություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող
պաշտոն, ստորագրություն (անուն, ազգանուն)
պաշտոն, ստորագրություն (անուն, ազգանուն)

09/11/2018 12:59:56

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

02.10.2018թ ք.Սևան

Սևանի քննչական բաժնի պետ Է.Պետրոսյանս,քննության առնելով վարույթիս տակ գտնվող թիվ 50102218 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ հուլիսի 18-ին,ժամը 13:00-ի սահմաններում Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի բնակիչ Նարինե Գուրգենի Հայրումյանը իրենց անասնագոմի տանիքում պարանով կախվելու եղանակով ինքնասպանություն է գործել:

Ինքնասպանությունի առաջ Նարինե Հայրումյանը գրություն է թողել հետևյալ բովանդակության՝

,,Եթե ինձ հետ բան պատահի ոչ-ոքի չմեղադրեք,ամեն ինչում ես եմ մեղավոր:Անդո ջան,/հանգուցյալի ամուսինն է / երբ ասել եմ փող չկա կամ տփոց եմ կերել կամ անվայել խոսքեր,ես ոչ մի օր խաղաղ չեմ ապրել,ոչ մեկին էլ փող չեմ տվել,խնդրում եմ ինձ կներեք,ախպերդ թող ուրախանա և կասես,որ ոչ գող եմ,ոչ էլ անբարո,ես ամեն ինչ հանդուրժել եմ,բայց ոչ էտ,վախից հնարել եմ սուտը ստի ետևից և ահա արդյունքը:Մայրամին կտաք թող Աննան պահի,երեխաներ ջան ինձ կներեք ձեր անխելք մաման ուրիշ ելք չունի:

Դու ինձ ուղարկումիր տոկոս փակելու փող տվեցիր,ախպերտ նստած ճամփին լրվին ասումա Անդոն փողա ստացել,գողնումա գնա Սևան: Ես գող չեմ, ուղղակի խճճվել եմ իմ հորինած ստերի մեջ :Արմենի տանը խառնվավ ,Սարոյ տանը խառնվավ,բան անել չկարաց,որովհետև նրանք ունեին սեփական խելք,կասես ախպեր ջան աչքդ լույս ,ազատվեցի գող և բոզ կնգանիցս:

Չնայած քրեական գործով կատարված նախաքննությամբ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել հանգուցյալ Նարինե Հայրումյանի ամուսին Անդրանիկ Սիմոնյանի կողմից իր կնոջը ծեծի ենթարկելու կամ նրա հասցեին անվայել խոսքեր ասելու վերաբերյալ, սակայն փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին,որ դեռևս 2017թ Նարինե Հայրումյանը պարտքով 25.000 դրամ փող է վերցրել իր համագյուղացի Նարգիզ Մովսիսյանից,ասելով,որ այդ փողը տալու է իր եղբոր կնոջը ՝ ՌԴ մեկնելու համար և խոստացել է 1 շաբաթից գումարը վերադարձնել: Խոստացած ժամկետում Նարինե Հայրումյանը պարտք գումարը չի վերադարձրել:

Նույն տարվա օգոստոս ամսին Նարինե Հայրումյանը 60.000 դրամ փող է պարտքով վերցրել Նարգիզ Մովսիսյանից,խոստանալով մի քանի օրից վերադարձնել և ՝ 25000 դրամը և՝ 60.000 դրամը,սակայն չի վերադարձրել:

2018թ հունվարի 15-ին Նարինե Հայրումյանը 120.000 դրամ պարտքով փող է վերցրել Նարգիզ Մովսիսյանից ,պատճառաբանելով,որ այդ փողը անհրաժեշտ է իր ամուսին Անդրանիկ Սիմոնյանին՝ ՌԴ մեկնելու համար,խոստացել է շատ շուտ գումարը վերադարձնել,սակայն չի վերադարձրել:Նարինե Հայրումյանի պարտքով վերցրած փողերի մասին նրա ամուսինը որևէ տեղեկություն չի ունեցել:

2018թ հունիս ամսվա սկզբներին Նարգիզ Մովսիսյանի ամուսին Հայկ Գևորգյանը գյուղում հանդիպել է Անդրանիկ Սիմոնյանին և պահանջել է հետ վերադարձնել նրա կնոջ կողմից պարտք վերցրած 205000 դրամը,ով որևէ տեղեկություն չի ունեցել իր կնոջ վերցրած պարտքերի մասին:Հայկ Գևորգյանը Անդրանիկ Սիմոնյանին ասել է նաև ,որ եթե փող չունեն,թող իրենց 1 գլուխ կովը վաճառեն և պարտքը վերադարձնեն:

2018թ հուլիսի 16-ին և 17-ին Նարգիզ Մովսիսյանը զանգահարել է Նարինե Հայրումյանին,պահանջել է վերադարձնել պարտքով վերցրած 2050000 դրամը: Վերջինս խոստացել է մինչև հուլիսի 17-ին,ժամը 12:00-ն վերադարձնել պարտք գումարը,սակայն չի վերադարձրել:Նույն օրը,երեկոյան,Նարգիզ Մովսիսյանը 2-3 անգամ զանգահարել է Նարինե Հայրումյանի բջջային հեռախոսահամարին,սակայն Նարինեն զանգերին չի պատասխանել :

2018թ հուլիսի 18-ի,ժամը 09:30-ի սահմաններում Նարինե Հայրումյանը զանգահարել է իր քույր Կարինե Հայրումյանին : Հեռախոսազրույցի ընթացքում վերջինս կռահելով,որ Նարինե Հայրումյանը անտրամադիր է,նրանից հետաքրքրվել է,թե որն է դրա պատճառը: Նարինե Հայրումյանը նրան պատասխանել է,որ շուրջ 200.000 դրամ փող է պարտք ,որի դիմաց այդ օրը երեկոյան պետք է գան իրենց կովը տանեն: Երբ Կարինե Հայրումյանը Նարինե Հայրումյանին առաջարկել է վաճառել կովը և մարել պարտքը,վերջինս ասել է թե ,, ով է կթու կովը վաճառում,որ իրենք վաճառեն,, : Այնուհետև Կարինե Հայրումյանը քրոջը առաջարկել է իրենց գառներից վաճառել և պարտքը մարել, Նարինեն ասել է,որ իրենց համար շատ ամոթ է,որ պարտքի դիմաց գան իրենց գոմից անասուն տանեն: Նարինե Հայրումյանը նաև ասել է,որ չգիտի ինչ անի,ավելի լավ է իրեն կախի,մեռնի:

Նույն օրը,ժամը 13:00-ի սահմաններում Նարինե Հայրումյանը կախվելու եղանակով ինքնասպանություն է գործել :

Նկատի ունենալով,որ քրեական գործով անհրաժեշտություն է ծագել պարզելու,թե ինչ հուզական վիճակում է գտնվել Նարինե Հայրումյանը ինքնասպանություն գործելուց առաջ,որի պարզաբանման համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ,ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-245-րդ, 249-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Թիվ 50102218 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն,որի կատարումն հանձնարարել որպես փորձագետ ճանաչված, ,, ,,Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ,, հիմնադրամի բժշկական հոգեբանության ամբիոնի հոգեբան -փորձագետ Գայանե Հակոբի Ղազարյանին :

2.Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/Ինքնասպանություն գործելու նախորդող կարճ ժամանակահատվածում ինչ հոգեվիճակում է գտնվել Նարինե Հայրումյանը :

Գտնվել է արդյոք նա հոգեճնշված վիճակում,թե ոչ:

բ/ Վերը նկարագրված գրությունը գրելիս Նարինե Հայրումյանը գտնվել է արդյոք այնպիսի հուզական վիճակում,որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության վրա և պատճառ հանդիսանար,որպեսզի նա ինքնասպանություն գործեր:

գ/ Նարինե Հայրումյանի որ անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքագծի վրա:

դ/Արդյոք Նարինե Հայրումյանը կարող էր ինքնասպանություն գործել իր թողած գրության մեջ նշած հանգամանքների պատճառով,թե նա ինքնասպանություն է գործել միայն այն պատճառով,որ իր ունեցած պարտքի դիմաց ստիպված էր լինելու մյուս կողմին տալ իր մեկ գլուխ կովը :

3/Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված,ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Բաժնի պետ,
արդարադատության առաջին դասի խորհրդական՝ Է.Պետրոսյան